ՍԴ3/0114/01/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16 հունիսի 2025 թվական | ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ՍԴ3/0114/01/22 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2025 թվականի մայիսի 30-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2022 թվականի հոկտեմբերի 18-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Գոռ Էդուարդի Իշխանյանի

վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգիրք) 376-րդ հոդվածի 3-րդ մասով և Նվեր Վիտալիի Մարտիրոսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 3-րդ մասով թիվ 92217520 (ՍԴ3/0114/01/22) քրեական վարույթը:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հոկտեմբերի 28-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0114/01/22 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի ապրիլի 7-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2023 թվականի մայիսի 15-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0114/01/22 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

3.1. 2023 թվականի հունիսի 21-ին թիվ ՍԴ3/0114/01/22 քրեական վարույթը վերաբաշխվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Ա.Գաբրիելյանին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2023 թվականի հունիսի 23-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0114/01/22 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին, իսկ 2024 թվականի մարտի 11-ին մտել է հիմնական դատալսումների փուլ:

4. 2025 թվականի մայիսի 12-ին թիվ ՍԴ3/0114/01/22 քրեական վարույթը վերաբաշխվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Հ.Մանուկյանին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի մայիսի 16-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0114/01/22 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

4.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի մայիսի 30-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0114/01/22 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

5. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հունիսի 9-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. 2022 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ Ն.Մարտիրոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 3-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ նա *«2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծած և վարած ագրեսիվ պատերազմի ընթացքում, ՀՀ կառավարության N 1586-Ն որոշմամբ հայտարարված ռազմական դրության պայմաններում, զբաղեցնելով ՀՀ ՋՈՒ ԳՇ ՕԳՎ օպերատիվ վարչության պետի պաշտոնը, հանդիսանալով պաշտոնատար անձ՝ հանրային ծառայող և ենթակա անձնակազմի նկատմամբ հանդիսանալով պետ՝ իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անփույթ վերաբերմունքի հետևանքով չի կատարել դրանք, որպիսի գործողություններն անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ: Այսպես.*

Նվեր Մարտիրոսյանը 2017 թվականի դեկտեմբեր ամսից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 26-ը զբաղեցնելով ՊԲ օպերատիվ բաժնի պետի պաշտոնը և համաձայն 2020 թվականի հունիսի 10-ից ՀՀ ՋՈՒ ԳՇ պետի թիվ 0177 հրամանով գործողության մեջ դրված ՀՀ զինված ուժերում «Օպերատիվ շտաբների ծառայության հրահանգի» 12-րդ կետի դրույթների՝ հանդիսանալով որպես պատասխանատու ենթակա սպաների կողմից մշակած փաստաթղթերի ամբողջականության ու որակի ձևակերպման, խնդիրների կատարման վերահսկողության, կառավարման կետերում օպերատիվ հերթապահների և մարտական կառավարման կենտրոնի

օպերատիվ խմբերի ծառայության կազմակերպման, ենթակա ու փոխգործակցող զորամիավորումների շտաբներ ժամանակին մարտական կառավարման ազդանշանների, հրամանատարի ու շտաբի պետի հրամանների և կարգադրությունների, ինչպես նաև՝ իրադրության օպերատիվ տեղեկատվության փոխանցման, զորքերին խնդիրների ժամանակին հասցնելու և դրանց կատարման հսկողության համար, 2020 թվականի հոկտեմբերի 11-ին պաշտպանության բանակի հրամանատարի կողմից խնդիր է ստացել պատրաստել մարտական կարգադրություն ՊԲ 35383 զորամասից մեկ վաշտ ՊԲ 18-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի ենթակայության ներքո ուղարկելու վերաբերյալ:

Նվեր Մարտիրոսյանը «Օպերատիվ շտաբների ծառայության հրահանգի» 12-րդ կետի համաձայն պատասխանատու լինելով ենթակա ստաների կողմից մշակած փաստաթղթերի ամբողջականության ու որակի ձևակերպման համար, ի կատարումն ՊԲ հրամանատարի հանձնարարության, նույն օրը ՊԲ հրամանատարի ստորագրմանն է ներկայացրել թիվ 0861 մարտական կարգադրությունը, համաձայն որի՝ մարտական խնդիր կատարելու համար ՊԲ 35383 զորամասից պետք է մեկ վաշտ համապատասխան երթուղով մեկներ Հադրութի շրջանի ճանապարհների խաչմերուկ՝ 9-րդ կիլոմետր կոչվող (7583) կոորդինատային տվյալներով տեղամաս և անցներ ՊԲ 18-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի ենթակայության ներքո: Մինչդեռ, Ն.Մարտիրոսյանը, անփույթ վերաբերմունք դրսևորելով իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ, դրանք կատարել է ոչ պատշաճ՝ ՊԲ հրամանատարի ստորագրմանը ներկայացված թիվ 0861 մարտական կարգադրության մեջ չի ապահովել ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի 15.10.2015 թվականի թիվ 017 դիրեկտիվով մարտական կարգադրությանը ներկայացվող և դրանում պարտադիր նշվող դրույթների ներառումը, այն է՝ մարտական կարգադրության մեջ չեն նշվել հակառակորդի վերաբերյալ գնահատումից բխող հակիրճ եզրակացություններ, երթի սկսման և ավարտման ժամը, որի հետևանքով ՊԲ հրամանատարի կողմից արձակված թիվ 0861 մարտական կարգադրության հիման վրա ՊԲ 35383 զորամասի հրամանատար Գոռ Իշխանյանի կողմից զորամասի 3-րդ հրաձգային գումարտակի 7-րդ վաշտին նույն օրը տրվել է թիվ 0504 մարտական կարգադրությունը, որում վերջինիս կողմից նույնպես չեն ներառվել և

պահպանվել ՀՀ ՋՈՒ ԳՇ պետի 15.10.2015 թվականի թիվ 017 դիրեկտիվով մարտական կարգադրությանը ներկայացվող և դրանում պարտադիր ներառվող դրույթները:

Այնուհետև, նույն օրը՝ ժամը 13:00-ի սահմաններում, ՊԲ 35383 զորամասի հրամանատարի կողմից ՊԲ օպերատիվ շտաբ զեկուցվել է անձնակազմի երթը սկսելու մասին, որի մասին Նվեր Մարտիրոսյանը զեկուցել է ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Ջալալ Հարությունյանին և վերջինս տվել է հանձնարարություն՝ վաշտի երթի վերաբերյալ տեղեկատվությունը 18-րդ ՀԴ հրամանատար, գեներալ-մայոր Կարեն Առստամյանին փոխանցելու վերաբերյալ, մինչդեռ Ն.Մարտիրոսյանը մինչ այդ և դրանից հետո միջոցներ չի ձեռնարկվել ՊԲ 18-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարության հետ համագործակցությունը կազմակերպելու ուղղությամբ, երթի սկսման վերաբերյալ չի հայտնել 18-րդ ՀԴ հրամանատարին, չի կազմակերպել ու վերահսկել մեկնող անձնակազմի տեղաշարժը՝ խախտելով 2020 թվականի հունիսի 10-ից ՀՀ ՋՈՒ ԳՇ պետի թիվ 0177 հրամանով գործողության մեջ դրված ՀՀ զինված ուժերում «Օպերատիվ շտաբների ծառայության հրահանգի» 12-րդ կետի դրույթները՝ ՊԲ հրամանատարի հիշյալ մարտական կարգադրությամբ ամրագրված խնդիրների կատարման նկատմամբ հսկողություն չի իրականացրել, որոնց արդյունքում անզգուշությամբ առաջացել են ծանր հետևանքներ՝ ՊԲ 35383 զորամասի 3-րդ գումարտակի 7-րդ վաշտի 73 զինծառայողներից բաղկացած անձնակազմն իրենց տեղափոխող մեքենաներով 2020 թվականի հոկտեմբերի 11-ին՝ կեսօրին, անցել է 9-րդ կիլոմետր կոչվող Հադրութի շրջանի ճանապարհների խաչմերուկ՝ (7583) կորդինատային տվյալներով տեղամասը և հայտնվել Հադրութի շրջանի Այգեստան գյուղի վարչական տարածքում, որտեղ հակառակորդի ռմբակոծության և դիվերսիոն գործողությունների հետևանքով անձնակազմի բոլոր զինծառայողները զոհվել են: (…)»[1]:

6.1. 2022 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ Գ.Իշխանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 3-րդ մասով հանրային քրեական հետապնդում

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 12, թերթեր 68-70:

է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ նա *«2020թ-ի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծած ագրեսիվ պատերազմի ընթացքում, ՀՀ կառավարության N 1586-Ն որոշմամբ հայտարարված ռազմական դրության պայմաններում, ենթակա անձնակազմի նկատմամբ հանդիսանալով պետ և պաշտոնատար անձ՝ իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անփույթ վերաբերմունքի հետևանքով չի կատարել դրանք, որպիսի գործողություններն անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ: Այսպես.*

Գոռ Իշխանյանը 2019 թվականի մարտի 11-ից զբաղեցրել է ՊԲ 35383 զորամասի հրամանատարի պաշտոնը և ՀՀ ՔՕՒ ներքին ծառայության կանոնագրքի 37-39-րդ հոդվածների համաձայն՝ ի պաշտոնե իրավասու է եղել տալ հրամաններ, կարգադրություններ և ապահովել դրանց կատարումը, ինչպես նաև ենթակա է անմիջական պատասխանատվության՝ տրված հրամանի և դրա հետևանքների համար: Գ.Իշխանյանը պաշտպանության բանակի հրամանատարի՝ 2020 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 0861 գաղտնի հրամանի համաձայն՝ մարտական խնդիր կատարելու համար պետք է մեկ հրաձգային վաշտ ուղարկեր ՊԲ 18-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի ենթակայության ներքո՝ Հադրութի շրջանի ճանապարհների խաչմերուկ՝ 9-րդ կիլոմետր կոչվող (7583) կորդինատային տվյալներով տեղամաս: ՀՀ ՔՕՒ ներքին ծառայության կանոնագրքի 39-րդ հոդվածի համաձայն, մինչև ենթականերին հրաման տալը Գոռ Իշխանյանը պարտավոր էր համակողմանիորեն գնահատել իրադրությունը, մանրակրկիտ ուսումնասիրել ՊԲ հրամանատարի կողմից տրված մարտական կարգադրությունը և իր կողմից տրվող մարտական կարգադրությունում պահպաներ 05.06.2006 թվականի ՀՀ ՊՆ թիվ [1]695 հրամանով հաստատված մարտական կանոնադրության 1-ին մասի և ՀՀ ՔՕՒ ԳՇ պետի 15.10.2015 թվականի թիվ 017 դիրեկտիվով մարտական կարգադրությանը ներկայացվող և դրանում պարտադիր ներառվող դրույթները, այն է՝ մեկնող անձնակազմին տրամադրեր հակառակորդի վերաբերյալ գնահատումից բխող հակիրճ եզրակացություններ, երթի սկսման և ավարտման ժամը:

Մարտական կարգադրության կազմման և կատարման սահմանված պարտադիր պահանջները պահպանելու փոխարեն Գոռ Իշխանյանը ծառայողական

պարտականությունների կատարման նկատմամբ անփույթ վերաբերմունքի հետևանքով չի կատարել դրանք, այն է՝ ՊԲ հրամանատարի մարտական կարգադրության հիման վրա զորամասի 3-րդ հրաձգային գումարտակի 7-րդ վաշտին նույն օրն իր կողմից տրված մարտական կարգադրությունում չի ներառել և պահպանել վերը նշված պարտադիր պահանջները՝ մեկնող անձնակազմին չի տրամադրել հակառակորդի վերաբերյալ գնահատումից բխող հակիրճ եզրակացություններ, մարտական կարգադրությունն իր կողմից տրվել է ի սկզբանե բանավոր եղանակով, որի դեպքում, սակայն ևս չեն նշվել մարտական կարգադրությանը վերաբերելի՝ վերը հիշատակված պարտադիր պահանջները:

Բացի այդ, Գ.Իշխանյանը, հանդիսանալով ՊԲ 35383 զորամասի հրամանատար, անձնակազմի կողմից երթը սկսելուց հետո, որևէ եղանակով չի վերահսկել անձնակազմի տեղաշարժը, ինչպես նաև միջոցներ չի ձեռնարկել ՊԲ 18-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարության հետ համագործակցությունը կազմակերպելու ուղղությամբ, որոնց արդյունքում անզգուշությամբ առաջացել են ծանր հետևանքներ՝ ՊԲ 35383 զորամասի 3-րդ գումարտակի 7-րդ վաշտի 73 զինծառայողներից բաղկացած անձնակազմն իրենց տեղափոխող մեքենաներով 2020 թվականի հոկտեմբերի 11-ին՝ կեսօրին, անցել է 9-րդ կիլոմետր կոչվող Հադրութի շրջանի ճանապարհների խաչմերուկ՝ (7583) կորդինատային տվյալներով տեղամասը և հայտնվել Հադրութի շրջանի Այգեստան գյուղի վարչական տարածքում, որտեղ հակառակորդի ռմբակոծության և դիվերսիոն գործողությունների հետևանքով անձնակազմի բոլոր զինծառայողները զոհվել են: (…)»[2]*:*

7. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննարկելով տուժողների իրավահաջորդների, տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչներ Ա.Հակոբյանի և Ա.Մխիթարյանի միջնորդությունները, 2023 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Տուժողների իրավահաջորդներ Ալեքս Վալենտինի Գևորգյանը, Մուրադ Ղարիբի Հարությունյանը, Համբարձում Առուստամի Զարգարյանը, Միհրան Փաշայի*

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 12, թերթեր 132-134:

Ջիվանյանը, Ռոբերտ Բենիկի Քոչարյանը, Նունե Ալյոշայի Առստամյանը, Արտյոմ Յուրիկի Առաքելյանը, Աննա Արթուրի Բալայանը, Սպարտակ Ալբերտի Առաքելյանը, Ատվերիկ Գրիգորի Սարգսյանը, Միրուշ Վանիկի Միրզաբեկյանը, Կոմիտաս Միքայելի Ջարգարյանը, Մուշեղ Եղիշեի Խաչատրյանը, Ռուսլան Ղարիբի Բարսեղյանը, Բորիկ Մուրադի Սարգսյանը, Վեներա Ասկարի Ղարայանը, Արթուր Արշալույսի Կիրակոսյանը, Փիրուզա Սամվելի Ենոքյանը, Էդուարդ Յուրիի Չիլինգարյանը, Տոնական Կաղենի Շահբարյան, Արթուր Արարատի Թևոսյանը, Ալեքսանդր Կիմի Ղազարյանը, Իշխան Ցոլակի Աթաբեկյանը, Արև Արտաշի Պետրոսյանը, Էլմիրա Ցոլակի Միրելյանը, Սուսաննա Լևիկի Դավթյանը, Աննա Ջանիբեկի Գասպարյանը, Էդգար Հրաչյայի Մովսիսյանը, Նվեր Գվիդոնի Ասատրյանը, Շահեն Մայիլի Ավետումյանը, Սամվել Անանիկի Արամյանը, Սվետլանա Վարդգեսի Մարգարյանը, Արմինե Արսենի Ամիրյանը, Արմինե Սերյոժայի Ալավերդյանը, Համլետ Ենոքի Գուլբանդյանը, Գոռ Մկրտիչի Տոնականյանը, Մաղեն Վանյայի Մանվելյանը, Արաքսի Սարգսի Գասպարյանը, Լուսինե Ռաֆիկի Սարգսյանը, Անդրանիկ Վլադիմիրի Մարտիրոսյանը, Գուրգեն Համբարձումի Գևորգյանը, Աշոտ Համբարձումի Զոբանյանը, Դավիթ Սուրենի Հախվերդյանը, Ջավեն Հրանտի Պապյանը, Սամվել Դերենիկի Մարիլյանը, Հովակիմ Լենքարի Միրեկանյանը, Մեյրան Սամվելի Խաչատրյանը, Խաժակ Օնիկի Պողոսյանը, Նելլի Հայկի Մանուկյանը, Համլետ Դավթի Այվազյանը, Մանվել Հովհաննեսի Ստեփանյանը, Շողիկ Մամիկոնի Հարությունյանը և Աննա Անդրանիկի Սարոյանը միջնորդություն են ներկայացրել Դատարան, որով խնդրել են թիվ ՍԴ3/0114/01/22 քրեական գործի ընդդատությունը փոխել և այն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Նույնաբովանդակ միջնորդություններ են ներկայացրել նաև տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչներ Անուշ Միսիթարյանը և Անժելիկա Հակոբյանը:

Տուժողի իրավահաջորդ Սամվել Սլավիկի Իշխանյանը հրաժարվել է դիրքորոշում արտահայտել:

Տուժողի իրավահաջորդ Դիաննա Էոնիկի Ավագյանը չի առարկել ներկայացված միջնորդությունների դեմ:

Մեղադրյալներ Գոռ Էդուարդի Իշխանյանը և Նվեր Վիրալիի Մարտիրոսյանը, ինչպես նաև նրանց պաշտպանները դիմում են ներկայացրել Դատարան, որով չեն առարկել ներկայացված միջնորդությունների դեմ:

Հանրային մեղադրող Ն.Հովսեփյանը չի առարկել ներկայացված միջնորդությունների դեմ:

(…)

Սույն գործի նյութերից երևում է, որ վարույթի մասնավոր մասնակիցների մեծամասնությունը՝ դատակոչված 55 փուժողի իրավահաջորդներից 14-ը բնակվում են Երևան քաղաքում, 16-ը Երևան քաղաքի մերձակա բնակավայրերում, բացի այդ, դատակոչված 28 վկաներից 6-ը բնակվում են Երևան քաղաքում, այսինքն՝ դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են Երևան քաղաքի առաջին ատյանի դատական տարածքում, բացի այդ՝ 53 փուժողի իրավահաջորդներ միջնորդել են գործի ընդդատությունը փոխել և այն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ սույն գործով մեղադրյալները ներկայումս բնակվում են ՀՀ Երևան քաղաքում:

Հատկանշական է նաև, որ ՀՀ Երևան քաղաքում են գտնվում նաև սույն գործով պաշտպանները և փուժողի ներկայացուցիչներից մեկը:

Այսպիսով, Դատարանն արձանագրում է, որ վարույթի մասնավոր մասնակիցների մեծամասնությունը և վկաներից շատերը բնակվում են Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս՝ մեծամասամբ Երևան քաղաքում, մեղադրյալները տվել են տարածքային ընդդատության փոփոխման համաձայնություն, գործը գտնվում է նախնական դատաքննության փուլում, հետևապես ընդդատությունը փոխելով չի տուժի արդարադատության շահը, ավելին՝ կապահովվի ողջամիտ ժամկետում գործի քննության սկզբունքը:

Դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ 12.12.2022 թվականից առ այսօր Ադրբեջանի Հանրապետության կողմից փակ է պահվում Գորիս-Ստեփանակերտ միջպետական ավտոճանապարհը, որի պատճառով հետաձգվել են ՀՀ Գորիս քաղաքում 20.12.2022 թվականին ժամը 14:30-ին, 10.02.2023 թվականին ժամը 14:00-ին և 24.03.2023 թվականին ժամը

14:00-ին սույն գործով նշանակված դատական նիստերը (նախագահող դատավորի Ստեփանակերտ քաղաքում գտնվելու պատճառով): Նույն պատճառով պայմանավորված մեղադրյալները, Հայաստանի Հանրապետությունում բնակվող տուժողները, պաշտպանները և տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչները չեն կարողացել ներկայանալ ԱՀ Ստեփանակերտ քաղաքում 07.04.2023 թվականին ժամը 10:00-ին նշանակված դատական նիստին: Նշված հանգամանքներից ելնելով, ինչպես նաև ճանապարհը բացվելու ժամկետի անորոշ լինելու պայմաններում, կարող է խախտվել դատավարության համապատասխան մասնակիցների արդար դատաքննության իրավունքը: (…)»[3]:

8. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի մայիսի 30-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Հանրային մեղադրող Վ.Վարդանյանն ըստ էության նշեց, որ տարածքային ընդդատության հարցով գտնում է, որ որևէ խոչընդոտ չկա, գործը քննվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում և առկա չէ որևէ արգելք արդարադատության շահի հետ կապված: Հայտնեց նաև, որ հետագայում այդ հիմքով դատական ակտերը վիճարկելու տեսանկյունից մեղադրանքի կողմը որևէ խնդիր չի տեսնում:*

Հանրային մեղադրողը հավելեց, որ գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգավորումներով սույն գործը կարող է քննվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ վարույթով նախաքննությունն իրականացվել է Երևան քաղաքում:

Դատարանի պարզաբանող հարցերին ի պատասխան՝ հանրային մեղադրողը հայտնեց, որ չի կարող պարզաբանել, թե ինչ պատճառաբանությամբ է նման պայմաններում քրեական վարույթն ի սկզբանե ուղարկվել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ հաշվի առնելով, որ այդ ժամանակ ինքը հանդես չի եկել որպես սույն վարույթով հանրային մեղադրող:

---

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 15, թերթեր 98-100:

Տուժողներն ըստ էության նշեցին, որ համամիտ են հանրային մեղադրողի այն դիրքորոշմանը, որ գործը քննվի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից:

Տուժողներն ըստ էության հայտնեցին նաև, որ սույն դեպքում վարույթի քննությունն անհարկի կձգձգվի: Իսկ Դատարանի պարզաբանող այն հարցադրումներին, որ ամեն դեպքում միևնույնն է դատական վարույթն ի սկզբանե է սկսվելու քննվել, տուժողները նշեցին, որ օրենսդրությամբ սխալ է նախատեսված այլ դատավորի վերամակագրվելու դեպքում վարույթի քննությունը կրկին ի սկզբանե սկսելու հետ կապված ընթացակարգը և իրենց դիրքորոշումը պայմանավորված է վարույթի ձգձգումներից խուսափելու հանգամանքով:

Պաշտպան Դ.Կարապետյանն ըստ էության նշեց, որ ինքը գտնում է, որ սույն քրեական գործը պետք է քննվի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգավորումները, մասնավորապես՝ այլ պետության տարածքում ենթադրաբար կատարված հանցանքի վերաբերյալ վարույթն ընդդատյա է այն դատարանին, որի դատական տարածքում է գտնվում մեղադրյալի բնակության կամ հաշվառման վերջին վայրը, իսկ եթե հնարավոր չի եղել այն պարզել, ապա այն դատարանին, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթը վերջինս իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: Մինչդեռ, սույն դեպքում առկա չէ Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված հանցանք և վկայակոչած կարգավորումների համաձայն սույն գործը պետք է քննվի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից, քանի որ գործը քննվում է այն դատարանի կողմից, որտեղ կատարվել է նախաքննությունը, իսկ նախաքննությունը կատարվել է ՀՀ ՔԿ զինվորական կենտրոնական ստորաբաժանման կողմից:

Դատարանի պարզաբանող հարցերին ի պատասխան՝ պաշտպան Դ.Կարապետյանն ըստ էության նշեց, որ տարածքային ընդդատությունը փոխելու հարցի քննարկման ընթացքում ինքը սույն վարույթով ներգրավված պաշտպան չի եղել և այդ հարցը չէր կարող բարձրացվել իր կողմից:

Պաշտպան Արման Բայադյանն ըստ էության նշեց, որ թեև ընդհանուր առմամբ իրենք որևէ առարկություն չունեն սույն քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի վարույթում քննվելու կապակցությամբ, սակայն միևնույն ժամանակ իրենք նույնպես մտահոգություն են տեսնում ընդդատության առերևույթ խախտման պայմաններում վարույթի քննության և հետագայում կայացվելիք ակտերի՝ այդ հիմքով վիճարկման հետ կապված:

(…)

Սակայն հարկ է փաստել, որ թիվ ՍԴ3/0114/01/22 քրեական վարույթով ներգրավված են թվով 64 մասնավոր մասնակից, որոնցից 28 անձ բնակվում է Երևան քաղաքում, իսկ 36 անձ բնակվում է Երևան քաղաքի տարածքից դուրս: Բացի այդ, դատակոչի ցուցակում ներգրավված են թվով 28 վկաներ, որոնցից միայն 6-ն են բնակվում Երևան քաղաքում, իսկ 22-ը բնակվում են Երևան քաղաքի տարածքից դուրս: Այսինքն՝ ստացվում է, որ ընդհանուր 92 վարույթի մասնավոր մասնակիցներից և վկաներից միայն 34 անձ է բնակվում Երևան քաղաքի տարածքում, իսկ 58 անձ բնակվում է Երևան քաղաքի տարածքից դուրս:

Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Այսինքն՝ տվյալ իրավանորմի ուսումնասիրությունից կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները՝

- տարածքային ընդդատությունը կարող է փոխվել բոլոր մեղադրյալների համաձայնությամբ,

- եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում:

Այլ կերպ, Դատարանի գնահատմամբ քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու մասին ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի ապրիլի 7-ի որոշման կայացման պահի դրությամբ վերը նշված նախապայմաններից մեկը, այն է՝ վարույթի մասնավոր

մասնակիցների և վկաների մեծամասնության՝ Երևան քաղաքի առաջին ատյանի դատարանի դատական տարածքում բնակվելու պայմանը բացակայում է: Միևնույն ժամանակ, հարկ է արձանագրել, որ Երևան քաղաքի տարածքից դուրս, թեկուզև Երևան քաղաքին մոտ մարզում բնակվելու հանգամանքը չի կարող նույնանալ և դիտարկվել որպես Երևան քաղաքի առաջին ատյանի դատարանի դատական տարածքում բնակվելու պայմանի առկայություն:

(...)

Անդրադառնալով նաև քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու մասին ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի ապրիլի 7-ի որոշման այն պատճառաբանությանը, որ Գորիս-Ստեփանակերտ միջպետական ավտոճանապարհի փակ լինելու պատճառաբանությամբ դատական նիստերը հետաձգվել են, ապա այս կապակցությամբ Դատարանն արձանագրում է, որ թեև սույն պայմաններում դա էական նշանակություն այլևս չի կարող ունենալ, սակայն, այնուամենայնիվ, նշված որոշման կայացման պահի դրությամբ ևս այդ հանգամանքը չէր կարող էական նշանակություն ունենալ, քանի որ վարույթի մասնավոր մասնակիցներից և վկաներից թվով 34 անձ բնակվել է Արցախի Հանրապետությունում և ճանապարհների փակ լինելու պատճառով Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայանալու անհնարինության դեպքում նշված անձինք նույն պատճառով չէին կարող ներկայանալ նաև Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան: Այլ խոսքով, Դատարանը գտնում է, որ տվյալ պատճառաբանությունը չի կարող բխել օրենսդրությամբ սահմանված պահանջներից և չի կարող ողջամիտ փաստարկ համարվել տարածքային ընդդատությունը փոխելու հարցի քննարկման շրջանակներում:

Ինչ վերաբերում է դատական նիստով հանրային մեղադրողի և պաշտպան Դավիթ Կարապետյանի հայտնած դիրքորոշումներին, ապա այս առումով նախ հարկ է նշել, որ վարույթի ոչ բոլոր մասնակիցներն են համակարծիք, որ սույն քրեական վարույթը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի ընդդատությանը: Մասնավորապես՝

պաշտպան Արման Բայադյանը դիրքորոշում է հայտնել, որ թեև իրենք խնդիր չեն տեսնում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից սույն վարույթի քննության հետ կապված, սակայն ճիշտ ընդդատության որոշման տեսանկյունից ամեն դեպքում խնդիր տեսնում են:

Բացի դա, հարկ է նկատել, որ թե՛ հանրային մեղադրողը և թե՛ պաշտպան Դավիթ Կարապետյանը հայտնել են, որ իրենք խնդիր չեն տեսնում և հետագայում այդ հիմքով դատական ակտերը չեն վիճարկելու, սակայն այս առումով ուշադրության է արժանի առնվազն այն հանգամանքը, որ սույն դատական նիստին որպես հանրային մեղադրող հանդես եկող Վարդան Վարդանյանի կողմից հաջորդող հարցերի քննարկման շրջանակներում դիրքորոշում հայտնվեց, որ ինքը չի կարող պատճառաբանություններ տրամադրել, թե վարույթի նկատմամբ դատավարական հսկողություն իրականացրած մեկ այլ դատախազի կողմից ինչ հիմնավորումներով է սույն քրեական վարույթն ուղարկվել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Բացի այդ էլ, ուշադրության է արժանի նաև պաշտպան Դավիթ Կարապետյանի հայտնած այն դիրքորոշումը, որ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու որոշման կայացման պահին ինքը սույն վարույթով ներգրավված չի եղել որպես պաշտպան և այդ հարցի քննարկման շրջանակներում վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին ընդդատյա լինելու հարցը չէր կարող բարձրացվել իր կողմից: Այսինքն՝ ստացվում է, որ վարույթի մասնակիցներն արդեն իսկ ըստ էության իրենց անհամաձայնությունն են հայտնում նախկինում ներգրավված մասնակիցների (դատախազի և պաշտպանի) գործողությունների և դիրքորոշումների վերաբերյալ կամ առնվազն այդ կապակցությամբ չեն ներկայացնում պարզաբանումներ:

Անդրադառնալով հանրային մեղադրողի և պաշտպան Դավիթ Կարապետյանի հայտնած դիրքորոշումներին, որ սույն դեպքում կիրառելի են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումները և դրանց համատեքստում տարածքային ընդդատությունը ճիշտ է, վարույթը ենթակա է քննության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից, քանի որ ենթադրյալ հանցանքը կատարվել է

Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս և հանրային մեղադրողը նույնպես համակարծիք է, որ սույն քրեական վարույթը պետք է քննվի նախաքննությունն իրականացրած մարմնի գտնվելու վայրի դատարանի կողմից, ապա նախ հարկ է նշել, որ նախաքննության ավարտից հետո ի սկզբանե վարույթն ուղարկվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, իսկ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ, այլ ոչ թե՝ վարույթն ըստ ընդդատության փոխանցելու վերաբերյալ: Բացի դա, ստացվում է, որ սույն վարույթով մեղադրական եզրակացությունը հաստատած հանրային մեղադրողը գտել է, որ վարույթն այլ դատարանին է ընդդատյա, իսկ հետագայում մեկ այլ հանրային մեղադրող գտնում է, որ ընդդատյա է՝ մեկ այլ դատարանի: Վերջին դիրքորոշման պայմաններում առնվազն Դատարանի համար չի կարող ընդունելի լինել այդ մոտեցումը, որ հանրային մեղադրողները որպես մեղադրանքի կողմ հանդես են գալիս մեկ միասնական կառույցի անունից և տարբեր դիրքորոշումներ են հայտնում, ընդ որում նման էական հարցի կապակցությամբ: Ավելին՝ այս կապակցությամբ ուշադրության են արժանի առնվազն թիվ ՍԴ1/0038/01/23, ՍԴ1/0094/01/23 և ՍԴ3/0021/01/25 քրեական գործերը, որոնք նույնաբնույթ փաստական հանգամանքների պայմաններում կրկին ուղարկվել են Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Հետևաբար, Դատարանը գտնում է, որ այդ պատճառաբանությունները չեն կարող հիմնավոր դիտարկվել:

Ինչ վերաբերում է տուժող կողմի հայտնած դիրքորոշումներին՝ վարույթի անհարկի ձգձգումների հետ կապված, ապա նախ հարկ է նշել, որ ցանկացած պարագայում, եթե վարույթի քննությունն իրականացվի սխալ ընդդատության պայմաններում, ապա կվտանգվի կայացված դատական ակտը: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ միայն այս պատճառաբանությամբ վարույթի քննությունը հնարավոր սխալ ընդդատությամբ իրականացնելը չի կարող իրավաչափ համարվել: Ավելին՝ հակառակ պարագայում երկարատև քննությունը կարող է ապարդյուն համարվել, եթե այդ ողջ քննությունն իրականացված լինի ընդդատության

խախտմամբ: Բացի այդ էլ, այս առումով հատկանշական է այն հանգամանքը, որ սույն վարույթի դատական քննությունը միևնույնն է պետք է սկսվի ի սկզբանե՝ անկախ այն հանգամանքից, թե որ դատարանի կողմից է այն քննության առնվելու: Այլ խոսքով, ստացվում է, որ ընդդատության հետ կապված ցանկացած որոշման կայացման դեպքում դատական վարույթն սկսվելու է ի սկզբանե, ուստի վարույթի հնարավոր ձգձգման հանգամանքը չի կարող նման պայմաններում ողջամիտ հակափաստարկ համարվել և որևէ կերպով ազդել այս հարցի քննության վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում ընդդատության կանոնի կիրառմանը, ուստի գտնում է, որ հարկ է թիվ ՍԴ3/0114/01/22 քրեական գործով ընդդատությունը որոշելու համար վարույթն ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին: (…)»[4]*:*

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Նախնառաջ հարկ է նշել, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0114/01/22 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար այն Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին: Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ վարույթի տարածքային ընդդատության հարցը վերջնականապես լուծում է Վճռաբեկ դատարանի քրեական պալատը, ուստի ընդդատության մասին հարցը ենթակա է լուծման Վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից:

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՍԴ3/0114/01/22 քրեական վարույթն ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

---

[4] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 22, թերթեր 86-101:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

11.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[5]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[6]:

12. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից:*

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[7]*:*

13. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած են ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտներից, որոնք կարող են առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

---

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցելիս, չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, և պետք է հաշվի առնվի նաև արդարադատության շահը:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

4. Այլ պետության տարածքում ենթադրաբար կատարված հանցանքի վերաբերյալ վարույթն ընդդատյա է այն դատարանին, որի դատական տարածքում է գտնվում մեղադրյալի բնակության կամ հաշվառման վերջին վայրը, իսկ եթե հնարավոր չի եղել այն պարզել, ապա այն դատարանին, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթը վերջինն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

5. Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների

մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը: (…)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություններ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

15. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Գոռ Իշխանյանի և Նվեր Մարտիրոսյանի վերաբերյալ թիվ 92217520 քրեական վարույթով նախաքննությունն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում[8]:

- սույն քրեական վարույթը Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ստացվել 2022 թվականի հոկտեմբերին 18-ին: Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, 2023 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ, քննարկելով տուժողների իրավահաջորդների, տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչների միջնորդությունները և փաստելով, որ վարույթի մասնավոր մասնակիցների մեծամասնությունը և վկաներից շատերը բնակվում են Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս՝ մեծամասամբ Երևան քաղաքում, ինչպես նաև այն, որ մեղադրյալներն իրենց համաձայնությունն են հայտնել վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ, որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը

[8] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 12, թերթ 259-260:

փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

Սյունիքի մարզի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը նշել է նաև, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը փոխելով չի տուժի նաև արդարադատության շահը, ավելին՝ կապահովվի քրեական գործը ողջամիտ ժամկետում քննության առնելու սկզբունքը[9]:

- Սույն քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է 2023 թվականի մայիսի 11-ին, որից հետո վերաբաշխվել է մեկ այլ դատավորի: 2024 թվականի մարտի 11-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն անցել է հիմնական դատալսումների փուլ, այնուհետև՝ 2025 թվականի մայիսի 12-ին քրեական վարույթը դարձյալ վերաբաշխվել է:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի մայիսի 30-ին որոշում է կայացրել քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին, փաստելով, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 2023 թվականի ապրիլի 7-ի որոշման կայացման պահի դրությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքը բացակայել է[10]:

16. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ թեև մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր է եղել պարզել Գ.Իշխանյանին և Ն.Մարտիրոսյանին վերագրվող ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, սակայն մեղադրանքի քննությունը տվյալ տարածքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում անհնարին է: Նման պայմաններում, Վճռաբեկ

---

[9] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[10] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը որոշելիս պետք է հիմք ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը, համաձայն որի՝ մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: Սույն վարույթով մինչդատական վարույթն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում, որի նստավայրը գտնվում է Երևան քաղաքում:

Միաժամանակ, հաշվի առնելով վարույթին ներգրավված մեծաթիվ մասնավոր մասնակիցների և վկաների բնակության վայրերը, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն վարույթի քննությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում բխում է նաև արդարադատության շահից:

17. Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը հարկ է համարում ընդգծել, որ սույն վարույթով **առերևույթ առկա է դատական շրջապտույտի, գործի ողջամիտ ժամկետում քննության և դրանից ածանցվող այլ իրավունքների խախտման վտանգ**, հաշվի առնելով, որ սույն քրեական գործը **2022 թվականի հոկտեմբերից գտնվում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում, սակայն մինչ օրս գործի քննությունը գտնվում է նախնական դատալսումների փուլում:**

18. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՍԴ3/0114/01/22 քրեական վարույթն ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր չէ:

19. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ՍԴ3/0114/01/22 վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Գոռ Էդուարդի Իշխանյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 3-րդ մասով և Նվեր Վիտալիի Մարտիրոսյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 3-րդ մասով թիվ ՍԴ3/0114/01/22 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ